ՍԱՄԱՐԱՅՈՒՄ ՕԾՎԵՑ Ս. ԽԱՉ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 16-ին Սամարա քաղաքում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանն օծեց Ս. Խաչ նորակառույց եկեղեցին:

Եկեղեցին կառուցվել է Սամարայի հայ համայնքի նախագահ Արթուր Մարտիրոսյանի բարերարությամբ, ինչպես նաև համայնքի այլ հայորդիների մասնակցությամբ: Հայոց նոր աղոթատունը վեր է խոյանում 400-ամյա քաղաքի կենտրոնում: Եկեղեցու բակում կառուցվել է նաև 1915 թ. Մեծ եղեռնի և 1988 թ. երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթող, որին կից հետագայում կառուցվելու է հայկական դպրոց ու մշակութային կենտրոն:

Ձեռամբ Սրբազան Հոր օծվեցին Ս. Խաչ եկեղեցու գլխավոր և չորս փոքր գմբեթների խաչերը, ապա եկեղեցու օծման սրբազան արարողության ընթացքում գինով ու ջրով լվացվեցին և Սուրբ Մյուռոնով օծվեցին եկեղեցու Ավագ Խորանը, բոլոր սյուներն ու մկրտության ավազանը: Նույն օրը տեղի ունեցավ նաև հուշակոթողի բացումը:

Հանդիսավոր արարողությանն իրենց մասնակցությունն էին բերել բազմահազար հայորդիներ, որոնց թվում՝ Ռուսաստանում ՀՀ դեսպանության և Ռուսաստանի հայերի միության ներկայացուցիչներ, ռուսահայ այլ համայնքների պատվիրակներ, ինչպես նաև քաղաքային ու համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ՝ քաղաքապետ Գեորգի Լիմանսկու և Ռուսաստանի Պետդումայի պատգամավոր Կ. Տիտովի գլխավորությամբ: Հրավիրյալների թվում էին նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևորականներ՝ Ռուս Եկեղեցու Սամարայի և Սիզրանսկի առաջնորդ Սերգի արքեպիսկոպոսի առաջնորդությամբ, ներկայացուցիչներ կաթոլիկ և լյութերական Եկեղեցիներից, իսկ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի բացմանը՝ նաև հրեական համայնքի հոգևոր այրեր:

Արարողության ավարտից հետո եկեղեցու կառուցման առթիվ ներկաներին ողջունեցին ու շնորհավորանքի խոսքեր ուղղեցին առաջնորդ Սրբազան Հայրը, Սերգի արքեպիսկոպոսը, Սամարայի քաղաքապետը և այլ հրավիրյալներ, ովքեր ընդգծեցին Եկեղեցիների դերը ժողովրդի կյանքում և կարևորեցին հայ և ռուս երկու ժողովուրդների ու Եկեղեցիների բարեկամությունը:

Արարողության ավարտին տեղի ունեցավ տոնական համերգ՝ երգի-պարի ազգային համույթների մասնակցությամբ: